Հավելված N 3
ՀՀ կառավարության 2021 թվականի
հուլիսի 1-ի N 1089 - Ն որոշման

**ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**ԿՈԼԵԳԻԱ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

7 հունիսի 2016 թվականի **N 66** քաղ. Մոսկվա

**ԱՅՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ, ՈՐԻ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ՄԱՔՍԱՅԻՆ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄՆ ՈՒՂԵԿՑՎՈՒՄ Է «ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ» ՄԱՔՍԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԻ (ՄՄ ՏԿ 035/2014) ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՄԲ**

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 25-ի N 294 որոշմամբ հաստատված՝ «Մաքսային միության մաքսային տարածք այն արտադրանքի (ապրանքների) ներմուծման կարգի մասին, որի առնչությամբ Մաքսային միության շրջանակներում սահմանվում են պարտադիր պահանջներ» հիմնադրույթի 2-րդ կետի «գ» ենթակետի իրագործման նպատակներով, «Եվրասիական տնտեսական միության շրջանակներում տեխնիկական կանոնակարգման մասին» արձանագրության («Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի N 9 հավելված) 8-րդ կետին և Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի 2014 թվականի դեկտեմբերի 23-ի N 98 որոշմամբ հաստատված՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի աշխատանքի կանոնակարգի N 2 հավելվածի 8-րդ կետին համապատասխան՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիան *որոշեց*.

1. Հաստատել այն արտադրանքի կից ներկայացվող ցանկը, որի առնչությամբ մաքսային հայտարարագրի ներկայացումն ուղեկցվում է «Ծխախոտային արտադրանքի տեխնիկական կանոնակարգ» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի (ՄՄ ՏԿ 035/2014) պահանջներին համապատասխանության գնահատման մասին փաստաթղթի ներկայացմամբ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում դրա պաշտոնական հրապարակման օրվանից 30 օրացուցային օրը լրանալուց հետո:

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի
2016 թվականի հունիսի 7-ի
N 66 որոշմամբ

**ՑԱՆԿ**

Արտադրանքի, որի առնչությամբ մաքսային հայտարարագրի ներկայացումն ուղեկցվում է «Ծխախոտային արտադրանքի տեխնիկական կանոնակարգ» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի (ՄՄ ՏԿ 035/2014) պահանջներին համապատասխանության գնահատման մասին փաստաթղթի ներկայացմամբ

| Արտադրանքի անվանումը (ծխախոտային արտադրատեսակները) | ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ ծածկագիր | Համապատասխանության գնահատման մասին փաստաթուղթ | Ծանոթագրություն |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| 1. Սիգարներ, սիգարիլլաներ (սիգարետաներ), սիգարետներ, կրետեկ, ծխագլանակներ, բիդի | 2402 10 000 0<br>2402 20 100 0<br>2402 20 900 0 | համապատասխանության մասին հայտարարագիր | |
| 2. Ծխախոտ՝ ծխելու մանր կտրատած, ծխախոտ՝ նարգիլեի համար, ծխախոտ՝ ծխամորճի | 2403 11 000 0<br>2403 19 100 0<br>2403 19 900 0 | համապատասխանության մասին հայտարարագիր | վերջնական սպառողին իրացվող արտադրանքի վաճառքի կամ առաջնային փաթեթավորման համար նախատեսված |

| | | | |
|---|---|---|---|
| | | | փաթեթվածքում |

Ծանոթագրություններ.1. Սույն ցանկը կիրառելու նպատակներից ելնելով՝ անհրաժեշտ է օգտագործել ինչպես արտադրանքի անվանումը, այնպես էլ ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ ծածկագիրը:

2. Ծխախոտային արտադրանք, որի վրա չի տարածվում «Ծխախոտային արտադրանքի տեխնիկական կանոնակարգ» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի (ՄՄ ՏԿ 035/2014) գործողությունը՝

ծխախոտային արտադրանքի նմուշներ, որոնք ներմուծվում են Եվրասիական տնտեսական միության տարածք լաբորատորիաների, ծխախոտային արտադրատեսակներ պատրաստողների և (կամ) ներմուծողների (վաճառողների) կողմից և նախատեսված են որակի և անվտանգության հսկողության, միջազգային ստանդարտներին համապատասխան չափումների, միջլաբորատոր համեմատական փորձարկումների անցկացման, Եվրասիական տնտեսական միության (Մաքսային միության) տեխնիկական կանոնակարգերի պահանջներին համապատասխան նորմավորվող պարամետրերի չափումների, սարքավորումների տրամաչափարկման, համեմատական թեստերի, դեգուստացիաների անցկացման, դիզայնի ուսումնասիրման համար.

ծխախոտային արտադրանքի նմուշներ, որոնք միջազգային ցուցահանդեսների և տոնավաճառների կազմակերպիչների և (կամ) մասնակիցների կողմից ներմուծվում են Եվրասիական տնտեսական միության տարածք որպես նմուշներ և ցուցանմուշներ, չծխելու ծխախոտային արտադրատեսակներ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

01.07.2021
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ